ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (1921 թ. ապրիլ–հունիս)

ԿՏՐԻՃ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Դաշնակների կազմակերպած փետրվարյան խռովությունը շատ զոհեր խլեց առանց այն էլ արյունաքամ եղած հայ ժողովրդից և ունեցավ ծանր հետևանքներ։ Խռովության վերացումից հետո ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի համար ամենակարևոր հարցը նրա հետևանքների վերացումն էր, որը պահանջում էր Հայաստանի առանձնահատկություններին համապատասխան քաղաքականության և կառավարման մեթոդների կիրառում։ Հարցն այն էր, որ փետրվարյան խռովության նախօրյակին, ռազմական կոմունիզմի քաղաքականությունը կիրառելիս միշտ չէ, որ հաշվի էին առնվում հանրապետության առանձնահատկությունները, թույլ էին տրվում սխալներ և շեղումներ այդ քաղաքականության սկզբունքներից. «շատ դեպքերում տեղական աշխատողները վերացնում էին ոչ միայն աշխատավոր գյուղացիության պարենային ավելցուկը, այլև ամբողջ պաշարը, որը գժգոհություն էր առաջ բերում»։ Այդ բանը ճարպկորեն օգտագործում էին սովետական իշխանության թշնամիները, իրենց կողմը գրավելով «մանր բուրժուական, ինչպես նաև ինտելիգենցիայի տատանվող տարրերին»։ Թշնամական տարրերը, օգտվելով սովետական ապարատի թուլությունից և անբավարար հսկողությունից, «ինքնագլուխ բռնագրավումներ էին կատարում երիտասարդ սովետական իշխանությունը վարկաբեկելու նպատակով»[1]։

Խռովության վերացումից հետո հանրապետության առաջ ծառացած գրժվարին հարցերի լուծումն առաջին հերթին պահանջում էր կուսակցական և պետական կառավարման ամրապնդում, մասսաներին ղեկավարելու լենինյան սկզբունքների կենսագործում։

Վ. Ի. Լենինը «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատությունում, անդրադառնալով կառավարման հարցերին, գրում էր. «Պետք է մտածել, որ հաջող կառավարելու համար, բացի համոզել կարողանալուց, բացի քաղաքացիական պատերազմում հաղթել կարողանալուց, անհրաժեշտ է գործնականապես կազմակերպելու կարողություն։ Սա ամենադժվար խնդիրն է, որովհետև գործը վերաբերում է տասնյակ և տասնյակ-միլիոնավոր մարդկանց կյանքի ամենախոր, տնտեսական հիմքերը նոր ձևով կազմակերպելուն»[2]։ Ղեկավարվելով լենինյան այս դրույթներով, Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը 1921 թ. մարտի 29-ին Գ. Կ. Օրջոնիկիձեին հղած ընդարձակ նամակում, կառավարման գործում տեղ գտած բացերը վերացնելու մտահոգությամբ, գրում էր. «որպեսզի այդ բոլորը չկրկնվի հարկավոր է հենց առաջին օրվանից (խռովությունը ճնշելուց հետո—Կ. Ս.) վարել երկրի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններին համապատասխան որոշակի և պարտադիր քաղաքականություն...»։ Այդ հարցերը լուծելու համար նա Գ. Կ. Օրջոնիկիձեին խնդրում է «անմիջապես գալ Երևան»[3]։

Հայաստանի վիճակին ծանոթանալու և ղեկավարման գործը կարգավորելու նպատակով 1921 թ. ապրիլի 17-ին Երևան է ժամանում Գ. Կ. Օրջոնիկիձեն։ Գործերի իրական վիճակին ծանոթանալուց հետո ապրիլի 19-ին ՀԿԿ Երե-

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, Երևան, 1967, էջ 137։

2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 212։

3 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ԿԿԱ), ֆ. 85, ց. 18, գ. 263, թ. 2։

վանի կազմակերպության և արհմիությունների խորհրդի միացյալ հանդիսավոր նիստում նա հանդես է գալիս «Ներկա մոմենտը և խորհրդային հանրապետությունների փոխհարաբերությունները» զեկուցումով։ Վերլուծելով Հայաստանում տեղ գտած դժվարությունների պատճառները, նա շարադրում է փետրվարյան խռովության հետևանքները վերացնելու նպատակով ձեռնարկվելիք խնդիրները։ Գ. Կ. Օրջոնիկիձեն, ելնելով ՌԿ(բ)Կ X համագումարի որոշումներից և Վ. Ի. Լենինի ցուցումներից, հանրապետության ղեկավարների ուշադրությունը հրավիրում է երկրի առանձնահատկություններից բխող քաղաքականություն վարելու անհրաժեշտության վրա։ Երկրի տնտեսական վերականգնման գործում նա առանձնահատուկ տեղ է վերապահում մտավորականությանը[4]։ Գ. Կ. Օրջոնիկիձեի Հայաստան գալը մեծապես նպաստում է գործերի կարգավորմանը։ Ճիշտ է, խռովությունը ճնշելուց հետո ներքին քաղաքականության մեջ որոշակի փոփոխություններ կատարվել էին, բայց այդ աշխատանքներն ընթանում էին շատ դանդաղ։ Առաջին և ամենահրատապ լուծում պահանջող հարցը ռազմական կոմունիզմի քաղաքականության վերացումն էր։ Որպես այդ քաղաքականությունից հրաժարվելու առաջին ձեռնարկ 1921 թ. ապրիլի 10-ին Հայհեղկոմը հրապարակում է «Սերմացուի մասին» դեկրետը, որով բռնագրավումից ազատ էր համարվում սերմացուն և ցանքսերից ստացվելիք բերքը։ Այս դեկրետին հաջորդում է ապրիլի 16-ի «Պարենային բռնագրավումների վերացման մասին» հրամանը, որտեղ մասնավորապես ասված էր. «Այսօրվանից վերացվում են ամեն տեսակ պարենի բռնագրավում, նույնպես և կայուն գները շուկայում»[5]։ Ի լրումն այս հրամանի, ապրիլի 29-ին հրապարակվում է պարենժողկոմի «Բռնագրավումների ամբողջական վերացման մասին» հրամանը, որտեղ ասվում էր. «Ի գիտություն բոլոր իշխանությունների, պետական և հասարակական հիմնարկությունների, որ համաձայն Հայհեղկոմի որոշման՝ իրականապես արգելվում են բոլոր տեսակի բռնագրավումները, խուզարկությունները որևէ թաքցրած ապրանքներ գտնելու նպատակով»[6]։ Չնայած եղած սուղ հնարավորություններին, գյուղատնտեսության վիճակը բարելավելու և գարնանացանի աշխատանքները կատարելու նպատակով ապրիլ ամսին Հայհեղկոմը ձեռնարկում է մի շարք միջոցառումներ։ Քայքայված գյուղատնտեսությունը վերականգնելու նպատակով ստեղծվում է հատուկ ֆոնդ։ Այդ ֆոնդին է հատկացվում մեկ միլիարդ ռուբլու վարկ։ Հանձնարարվում է գյուղատնտեսության կոմիսարիատին այդ ֆոնդից փոխառություն տալ գյուղատնտեսությամբ զբաղվողներին[7]։ Ապրիլի 24-ին հեղկոմը որոշում է կայացնում ցանքատարածությունների ընդարձակելու մասին։ Այս նպատակով մշակվում է միջոցառումների հետևյալ պլանը. 1. սերմանման գործը համարվում է հարվածային ու առաջնահերթ։ 2. Վերացվում է գյուղացիներին սերմացուով ապահովելու վերաբերյալ հեղկոմի փետրվարի 10-ի որոշումը։ 3. Պարենժողկոմատին կից կազմակերպվում է սերմի մթերման ու բաշխման արտակարգ հանձնաժողով։ 4. Արտակարգ հանձնաժողովը պարտավոր է գնված սերմացուն տեղափոխել գյուղատնտեսության ժողովրդական կոմիսարիատի նշած վայրերը և պահել հանձնաժողովի պահեստներում՝ մինչև այն բնակչությանը բաժանելը։ 5. Սերմացուն գյուղական համայնքներին, հիմնարկներին, ընկերություններին ու մասնավոր անձանց բաշխում են գավառային հեղկոմները...։ 6. Սերմացուն գյուղական համայնքներին բաց է թողնվում ի դեմս նրանց ներկայացուցիչների, որոնք գյուղական հեղկոմների հետ միասին այն բաժանում են իրենց կարիքավոր համագյուղացիներին։ 7. Բոլոր գյուղական համայնքները, հիմնարկները, ընկերություններն ու գյուղացիները պարտավոր են ամբողջովին ցանել դաշտերը՝ անկախ կառավարության օգնու-

4 «Կոմունիստ», 23. IV. 1921։

5 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջմիածին, 1921, էջ 17։

6 «Կոմունիստ», 29. IV. 1921։

7 «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1974, էջ 159։

թյունից։ 8. Ցանքերից ստացվող ամբողջ բերքը պատկանելու է տնտեսատերերին և ոչ մի բռնագրավման չի կարող ենթարկվել։ 9. Այն հողատերերը, որոնք չեն կարող ցանել դրանք, պարտավոր են այդ մասին հաղորդել գյուղատնտեսության գավառային բաժնին, որը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի հիշյալ հողերն օգտագործելու ուղղությամբ։ 10. Թույլատրվում է բնակչության, անասունների և գյուղատնտեսական մթերքների ազատ տեղաշարժ հանրապետության ամբողջ տերիտորիայում...։ 11. Սերմացուի և բանող անասունների բռնագրավումն արգելելու հետ մեկտեղ, որի մասին հայտարարված է 1921 թ. ապրիլի 10-ի դեկրետում, արգելվում է նաև ֆուրաժի և սննդամթերքների բռնագրավումը։ Որոշման հաջորդ կետերով համապատասխան ժողկոմատներին և տեղական հեղկոմներին պարտավորեցվում էր գյուղացիներին գյուղատնտեսական գործիքներով օգնելու և ցանքատարածությունները փչացումից պաշտպանելու նպատակով գործադրելու հնարավոր բոլոր միջոցները[8]։ Մենք այս որոշումը համարյա ամբողջովին մեջ բերեցինք ցույց տալու համար, որ այն մանրամասն մշակվել էր երկրի տնտեսական կյանքը բարձրացնելու, ինչպես նաև նախկին չարաշահումներին վերջ տալու նպատակով։ Գյուղատնտեսական աշխատանքները հաջող կատարելու համար անհրաժեշտ էր հոգ տանել նաև ոռոգման մասին։ Այդ նպատակով Հայհեղկոմը հատուկ դեկրետ է ընդունում ոռոգման սիստեմի բարելավման մասին, որի համար գյուղժողկոմատին դրամական զգալի հատկացում է տրվում[9]։

Լուծում պահանջող մյուս խնդիրը հազարավոր փախստականներին իրենց հայրենի օջախը վերադարձնելու հարցն էր, որոնք խռովության ժամանակ հեռացել էին Հայաստանից։ Այս հարցն ուներ տնտեսական և քաղաքական կարևոր նշանակություն։ Հարկավոր էր վարել այնպիսի քաղաքականություն, որը ժողովրդի որոշ մոլորված խավերի մեջ կուժեղացներ վստահությունը և հավատը սովետական իշխանության հանդեպ։ Բացի այդ, դաշնակների հակասովետական պրոպագանդայի հետևանքով տասնյակ գյուղեր դատարկվել էին, որը մեծապես ազդում էր գարնան գյուղատնտեսական աշխատանքների վրա։ Այս խնդիրները լուծելու նպատակով Հայհեղկոմը 1921 թ. ապրիլի 10-ին հաստատում է «Ներման մասին» դեկրետը, որով հնարավորություն է ընձեռվում հազարավոր տարագրյալների վերադառնալու հայրենիք։

«Կոմունիստ» թերթը տպագրում է Ե. Զուբարի «Խաղաղություն և աշխատանք» հոդվածը։ «Հայաստանի բանվորներն ու գյուղացիները,— ասված է հոդվածում,— և բոլոր աշխատավորները, բոլոր քաղաքացիները թող հեռու քշեն իրենց գլխից այն բոլոր դժոխային սարսափները, որ տարածել էին դաշնակները կոմունիստների ու կարմիր բանակի մասին։ Այսօր արդեն ամեն մի քաղաքացի, ամեն մի աշխատավոր իր աչքով պիտի տեսնի, որ... խորհրդային իշխանությունը ոչ մի աշխատավորից վրեժ չի ուզում լուծել։ Սրտի խոր ցավով նա իր գլուխը թեքում է խաբված անմեղ զոհերի առաջ և կենդանիներին հրավիրում է դեպի գործ, աշխատանք»[10]։ Այս հոդվածում մեկնաբանված է դեկրետի հիմնական նպատակը։ Ապրիլի 10-ի դեկրետը չէր տարածվում խռովության ղեկավարների վրա։ Գ. Կ. Օրջոնիկիձեի Երևան գալը և տեղում իրադրությանը ծանոթանալը նպաստում է դրության բարելավման առաջընթացին։ Նրա խորհրդով[11] ապրիլի 24-ին Հայհեղկոմը ընդունում է «Ընդհանուր ներման մասին» դեկրետը, որով ներում է շնորհվում խռովության բոլոր մասնակիցներին։ Դեկրետում ասվում էր. «ազատ համարել քաղաքական և ամեն տեսակի ու ձևի պատասխանատվությունից առանց բացառության բոլոր նրանց, ովքեր

---

8 Նույն տեղում, էջ 157—159։

9 Նույն տեղում, էջ 160։

10 «Կոմունիստ», 10. IV. 1921։

11 Ш. М. Амирханян, Из истории борьбы за Советскую власть в Армении, Ереван, 1967, с. 174.

որևէ կերպ պայքարել են Հ. Ս. խորհրդային հանրապետության դեմ, անկախ նրանց անմիջական գործից, կոչումից, դիրքից, պաշտոնից»[12]։

Ահա թե ինչպես է մեկնաբանում այս դեկրետի ընդունման դրդապատճառները ՀԿԿ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը «Ընդհանուր ներում» առաջնորդող հոդվածում. «Ապրիլի 10-ի մասնակի ներման դեկրետին հետևեց ամսի 24-ի դեկրետը, որով ռազմա-հեղափոխական կոմիտեն ընդհանուր ներում է ենթարկում վրացյանական ավանտյուրայի բոլոր մասնակիցներին... Ներողամտության այդ մեծ ակտի նպատակը աշխատավոր տարրերի վերաբերմամբ առանձնապես պարզ է և աներկբայելի, մոլորված խաբված գյուղացիներին հողը կանչում է աշխատանքի և նրանք պետք է վերադառնան դեպի գութանը։ Նույնը պետք է ասել խաբված շփոթված թրքահայ գաղթականների, առանձնապես քաջարի սասունցիների մասին, խորհրդային իշխանության համար նրանք խորթ, ատելի որդիներ չեն, այլ հայ աշխատավորության ամենադժբախտ մասը, հիվանդ գազազած մի ժողովուրդ, որին Հայաստանի կառավարությունը պարտավոր է խնայել, բուժել նրա վերքերը և տալ ազնիվ, արդյունավետ աշխատանքի հնարավորություն»[13]։

Անդրադառնալով արևմտահայության նկատմամբ ունենալիք վերաբերմունքին, «Կոմունիստը» մեկ այլ հոդվածում քննադատում էր այն անտարբերությունը, որ ժամանակին հանդես էր բերվել նրանց նկատմամբ։ «Կոտրել այդ անտարբերությունը, պարզել տաճկահայ շարժման հասարակական քաղաքական բնույթը, ընդառաջել ժողովրդական զանգվածների ռեալ կարիքներին, կնշանակեր ոչ միայն փարատել այն հրեշավոր թյուրիմացությունը, որ զենք ծառայեց փետրվարյան հակահեղափոխությանը, այլև շարժման մեջ դնել հեղափոխական մի գործոն, որը նոր գրավական կարող է լինել գալիք հաղթությունների համար»[14]։ Արևմտահայության շրջանում տարվող գաղափարաքաղաքական աշխատանքներն ուժեղացնելու նպատակով 1921 թ. ապրիլին Թիֆլիսում սկսում է լույս տեսնել արևմտահայ գաղթականության գործադիր մարմնի օրգան «Կարմիր օրեր» թերթը, որը պարբերաբար անդրադառնում էր գաղթականությանը հուզող սոցիալ-տնտեսական խնդիրներին, ցույց տալով, որ միայն բանվորագյուղացիական իշխանությունն է կոչված լուծելու գաղթականությանը հուզող կենսական խնդիրները և ամենից առաջ նրանց հող և օթևան տալու հարցերը. «դեպի արևմտահայ աշխատավորության կարիքները պետք է ցույց տալ վերին աստիճանի ուշադիր վերաբերմունք և անել հնարավոր մաքսիմումը, որպեսզի գեթ մասամբ թեթևացնենք նրա ներկա դրությունը»[15],— եզրափակում է թերթը։ Արևմտահայության շրջանում տարվող գաղափարական աշխատանքներն ուղեկցվում էին հակադաշնակցական պրոպագանդայով, որը գաղթական զանգվածների աչքում մերկացնում էր դաշնակների անհեռատես քաղաքականությունը և նպաստում էր ճիշտ հասկանալու սովետական իշխանության միջոցառումների մարդասիրական էությունը, հասկանալու, որ միայն այդ իշխանությունն է ի վիճակի փարատելու իրենց վերքերը։

1921 թ. ապրիլին հանրապետության կյանքում կատարված մյուս կարևոր իրադարձությունն Ալեքսանդրապոլի ազատագրումն էր։ Շուրջ վեցամսյա օկուպացիայից հետո ապրիլի 22-ին թուրքերը վերջապես հեռացան Ալեքսանդրապոլի գավառից։ Նույն օրն ի պատիվ քաղաքի ազատագրման տեղի է ունենում միտինգ, որին մասնակցում են 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վելիկանովը և Հայհեղկոմի լիազոր Պ. Մակինցյանը։ Այդ մասին ականատեսը գրում է. «Շուրջդ տեսնում էիր գրկախառնություն և ուրախության կանչեր այն ժողովրդի, որը 24 ժամ առաջ գերեզմանոցային կյանք ուներ»[16]։

---

12 *«Խորհրդային Հայաստան», Երևան, 1926, էջ 24։*

13 *«Կոմունիստ», 26. IV. 1921։*

14 *Աշ. Հովհաննիսյան, Հրեշավոր թյուրիմացություն («Կոմունիստ», 19. IV. 1921)։*

15 *«Կարմիր օրեր», 10. IV. 1921։*

16 *«Կոմունիստ», Բաքու, 1921, № 116։*

Շուտով Հայհեղկոմի կողմից կազմված հատուկ հանձնաժողովը պարզում է Ալեքսանդրապոլի գավառում քեմալականների կատարած գազանությունների հետևյալ պատկերը. «Սպանվածներ—60.000, սովից մահացածներ—34.000, բռնաբարվածներ—50.000, որից 20.000 աղջիկներ, գերվել են 8000։ Տարվել են խոշոր եղջերավոր անասուն՝ 80.000 գլուխ, մանր եղջերավոր—25.000 գլուխ, ողջ գյուղատնտեսական մթերքները և տեխնիկան։ Ընդհանուր առմամբ տարվել է 143.416.500 ռուբլու արժողության ապրանք»[17]։ Եթե սրան գումարենք թուրքերի կատարած ավերածությունները, ներառյալ նաև հայ-թուրքական «չեզոք գոտու» վիճակը, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի չանքեր էր պահանջվում Հայհեղկոմից թուրքերի ավերած ճանապարհը վերականգնելու համար։ Ալեքսանդրապոլի ազատագրումն ունեցավ տնտեսական և բարոյաքաղաքական մեծ նշանակություն։ Հայաստանը ձերբազատվեց քեմալականների ամենօրյա ոտնձգություններից, ազատվեց երկաթուղին և սովետական հանրապետություններն անարգել կարող էին Հայաստանին օգնության ձեռք մեկնել։

Դեռևս մարտի 30-ին Գ. Վ. Չիչերինը Հայաստանի մատակարարման հարցը կարգավորելու նպատակով Վ. Ի. Լենինին գրում էր. «Մեծարգո Վլադիմիր Իլյիչ. սովետական իշխանության հաստատումից հետո հաջորդ ակտը դա մատակարարումն է, այդ տեսակետից ինձ շատ է անհանգստացնում Հայաստանի վիճակը»[18]։

Ապրիլի 4-ին ՌՍՖՍՀ ԺողկոմսովետԻ որոշմամբ Հայաստանին է հատկացվում մեկ ու կես միլիոն ռուբլի ոսկի։ Այդ մասին ապրիլի 9-ին Վ. Ի. Լենինը հեռագրով հայտնում է Գ. Կ. Օրջոնիկիձեին. «Մենք ձեռք ենք առել մի շարք միջոցներ, մի քիչ ոսկի ենք տվել Հայաստանին, հաստատել ենք պարենժողկոմին տրվող ամեն տեսակ հանձնարարությունները»[19]։ ՌՍՖՍՀ կառավարության կողմից ուղարկված ոսկին ապրիլի 28-ին ստացվում է Երևանում[20]։ Թուրքական գոկատի Նախիջևանից հեռանալուց հետո բացվել էր նաև Երևան—Նախիջևան—Ջուլֆա երկաթգիծը, որը Հայհեղկոմին հնարավորություն էր ընձեռում Իրանի հետ առևտրական հարաբերություններ հաստատելու համար։ Ապրիլ ամսին Մակուի խանությունից գնվում է 30 հազար փութ ցորեն[21]։

Ինչպես տեսնում ենք, մեկ ամսվա ընթացքում զգալի աշխատանքներ էին կատարվել գործերի վիճակը շտկելու համար։ Հիմնականում վերացված էին խռովության ներքին և արտաքին շարժառիթները ծնող պատճառները։ Հանրապետության ներքին քաղաքականության մեջ կատարվող շրջադարձն առաջին հերթին պայմանավորվում էր ՌԿ(բ)Կ X համագումարի որոշումներով և Վ. Ի. Լենինի դիրեկտիվներով[22]։ Չնայած այս ամենին, ներքին քաղաքականության մեջ տեղաշարժերը դեռևս դանդաղ էին կատարվում։ Թույլ էր կապը կառավարման կենտրոնական և տեղական մարմինների միջև։ Արմատական վերափոխման կարիք էին զգում կուսակցական ապարատի գործունեության ձևերն ու մեթոդները։ Ճիշտ է, առանձին գործիչների միջև եղած նախկին վեճերն ու տարաձայնություններն այլևս սուր բնույթ չէին կրում, բայց տակավին խանգարում էին գործին։

---

17 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 114, ց. 1, գ. 46, թ. 4—5։

18 Ս. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1969, էջ 302։

19 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 52, էջ 156։

20 «Կոմունիստ», 29. IV. 1921։

21 Նույն տեղում։

22 Նկատի ունենք Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո տեղական առանձնահատկություններին համապատասխան քաղաքականություն վարելու մասին Գ. Կ. Օրջոնիկիձեին տված Վ. Ի. Լենինի դիրեկտիվները, որոնք, բնականաբար, հասցվել էին նաև ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի ղեկավարներին։

ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի վերակազմման աշխատանքները սկսվում են Ալ. Մյասնիկյանի և Ս. Լուկաշինի (Սրապիոնյան) Հայաստան ժամանելուց հետո։ 1921 թ. մայիսի 2-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Ալ. Մյասնիկյանի մասնակցությամբ քննարկում է ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի նոր կազմի հարցը և հանձնարարում է Թեկնածուներին ներկայացնել Կովկասյան բյուրոյի հաստատմանը[23]։ Կովկասյան բյուրոյի այս նիստում որոշվում են նաև Հայաստանին ֆինանսական և տնտեսական օգնություն ցույց տալու մի քանի հարցեր։ Վրաստանի և Ադրբեջանի հեղկոմներին հանձնարարվում է Հայաստանին հատկացնել մեկական միլիոն ռուբլի վարկ։ Օրջոնիկիձեին և Ֆիգատներին հանձնարարվում է երեք օրում պարզել, թե Վրաստանից ու Ադրբեջանից որքան մեքենաներ կարելի է հատկացնել Հայաստանին։ Որոշվում է նաև Թիֆլիսի հայկական տպարաններից մեկը հատկացնել Հայաստանին[24]։

Գ. Կ. Օրջոնիկիձեից մանրամասն տեղեկություններ ստանալով Հայաստանի մասին, Ալ. Մյասնիկյանը մայիսի 4-ին Թիֆլիսից մեկնում է Հայաստան։ 1921 թ. մայիսի 5-ին Ալ. Մյասնիկյանը և Ս. Լուկաշինը ժամանում են Երևան։ Մայիսի 9-ին ի պատիվ նրանց ժամանման Երևանում տեղի է ունենում հանդիսավոր նիստ։ Հայհեղկոմի նախագահը հանրապետությունում ստեղծված վիճակի և ճգնաժամից դուրս գալու խնդիրների մասին իր տեսակետները շարադրում է այդ հանդիսավոր նիստում արտասանած ճառում։ Անդրադառնալով հանրապետության տնտեսական վիճակին, նա ասում է. «Դուք տեսնում եք, որ դրությունը անմխիթար է։ Սա ամենադաժան, ամենադժբախտ երկիրն է Անդրկովկասում։ Դեռ այս երկրի փողոցներում, դաշտերում (հիշեցեք Ալեքսանդրապոլը) ցրված են դիակներ։ Քաղցն ահագին է։ Պետք է կռվել քաղցի դեմ։ Քաղցած Ռուսաստանը մեզ ինչ որ կարողանում է տալիս է, բայց այդ օգնությունը չի լրացնի մեր պետքերի 5 տոկոսը։ Մնում է մեր ներքին ուժերով հոգալ»[25]։ Նա սկզբունքային դիտողություններ է անում նաև զորքի և արտակարգ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ։ «Զորքին, Չեկային մենք ասում ենք՝ նախկին միջոցներով չաշխատել, բայց հսկել, որ մութ ուժերը էլի գլուխ չբարձրացնեն»[26]։

1921 թ. մայիսին ավարտվում են հանրապետության ղեկավար մարմինների վերակազմման աշխատանքները։ 1921 թ. հունիսի 3-ին Կովկասյան բյուրոն հաստատում է ՀԿԿ Կենտկոմի նոր կազմը, որի մեջ մտնում էին Ա. Կարինյանը, Պ. Մակինցյանը, Հ. Ազատյանը, Ս. Լուկաշինը (քարտուղար), Ա. Բեգզադյանը, Ա. Խաչիևը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Ա. Նուրիջանյանը և Ալ. Մյասնիկյանը[27]։

1921 թ. մայիսի 21-ին Հայհեղկոմը վերակազմվում է Ժողովրդական կոմիսարների խորհրդի, հետևյալ կազմով. ժողկոմխորհի նախագահ և ռազմական գործերի ժողկոմ՝ Ալ. Մյասնիկյան, արտաքին գործերի ժողկոմ՝ Ա. Մռավյան, ներքին գործերի ժողկոմ՝ Պ. Մակինցյան, արդարադատության ժողկոմ՝ Ա. Կարինյան, ժողովրդական տնտեսության խորհրդի ժողկոմ՝ Ս. Սրապիոնյան (Լուկաշին), հողագործության ժողկոմ՝ Ա. Երզնկյան, պարենավորման և արտաքին առևտրի ժողկոմ՝ Ալ. Բեգզադյան, ֆինանսների ժողկոմ՝ Ս. Խանոյան, աշխատանքի և սոցիալական ապահովության ժողկոմ՝ Ա. Խաչյան. լուսավորության ժողկոմ՝ Ա. Հովհաննիսյան, առողջապահության ժողկոմ՝ Ս. Համբարձումյան, փոստ-հեռագրի ժողկոմ՝ Դր. Տեր-Սիմոնյան, բանվորագյուղացիական ժողկոմ՝ Ա. Շահվերդյան[28]։

---

23 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 18, գ. 58, թ. 2։

24 Նույն տեղում։

25 Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 336։

26 Նույն տեղում։

27 Տե՛ս С. В. Харманд а р я н, Ленин н становление Закавказской федерации, Ереван, 1969, с. 81.

28 «Կոմունիստ», 24. V. 1921։

ՀԿԿ Կենտկոմի և կառավարության հետագա արդյունավետ գործունեությունը լավագույն ապացույցն էին այն բանի, որ միայն հանրապետության առանձնահատկություններից բխող քաղաքականությունն էր ի վիճակի երկիրը դուրս բերելու ծանր վիճակից։ Հանրապետության ղեկավարները որպես գործողության ուղեցույց ունեին ապրիլի 14-ին Կովկասի կոմունիստներին Վ. Ի. Լենինի հղած պատմական նամակը՝ որն իր հետ Թիֆլիս էր բերել Ալ. Մյասնիկյանը։ Կովկասյան բյուրոյի մայիսի 2-ի որոշմամբ այն հրապարակվել էր մամուլում։ Այդ նամակով Վ. Ի. Լենինը կովկասյան հանրապետությունների ղեկավարներից պահանջում էր, որ նրանք «հասկանան իրենց դրության, իրենց հանրապետությունների դրության յուրահատկությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[29]։

Այսպիսով, 1921 թ. ապրիլ-հունիս ամիսներին հանրապետությունում սովետական կարգերի ամրապնդման գործում առաջնային նշանակություն ունեցան. 1. ռազմական կոմունիզմի քաղաքականության վերացումը, 2. Ալեքսանդրապոլի գավառի ազատագրումը, որով Հայաստանը ձերբազատվեց քեմալականների ոտնձգություններից։ 3. Ներման մասին դեկրետները, որոնք հնարավորություն ընձեռեցին, որպեսզի դաշնակցական պրոպագանդայի հետևանքով հայրենիքը լքած հազարավոր ընտանիքները վերադառնան հայրենի օջախները։ Շրջահայաց քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ արևմտահայ գաղթականությունն ըմբռնումով մոտեցավ կատարված իրադարձություններին և գալիքի իր հույսերը կապեց սովետական կարգերի հետ։

Անշուշտ, հանրապետությունում սովետական կարգերի ամրապնդման ուղղությամբ ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի գործադրած ջանքերը սպասված արդյունքը չէին տա, եթե չլիներ Սովետական Ռուսաստանի քաղաքական և տնտեսական օգնությունը։

МЕРОПРИЯТИЯ, НАПРАВЛЕННЫЕ НА УПРОЧЕНИЕ СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ (апрель—июнь 1921 г.)

КТРИЧ САРДАРЯН

Резюме

После ликвидации февральской авантюры для упрочения Советской власти в Армении первостепенное значение имели: отказ от политики военного коммунизма, декреты Ревкома об амнистии от 10 и 24 апреля 1921 г., освобождение Александропольского уезда от турецких оккупантов. Для ликвидации последствий гражданской войны большую роль сыграли решение X съезда РКП (б), письмо В. И. Ленина коммунистам Кавказа от 14 апреля 1921 г., а также постоянная политическая и материальная помощь правительства РСФСР.

29 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 43, էջ 237։